

զաւազ աշակերտն իւր զԿեսարացի Գրիգոր վարդապետն եւ յանձն արար նմա զտէր Մովսէսն ստելով. Յանձն առնեմ զսա քեզ, զի փոխանակ իմ հովուեալ պահեսցես զսա եւ հասուցեալ յարբունս հասակի եւ վարդապետական ուսման. եւ տացես զզաւազան եւ զպատիւ վարդապետական. եւ եղիցի օրհնութիւն իմ ի վերայ քո եւ դորա» (էջ 284—285) :

Սրապիտնի յանձնարարութիւնը կատարուած է հաւանօրէն թղթով. վասն զի Կեսարացին ներկայ չէր գտնուած Վարդապետին յուղարկաւորութեան: Իսկ Մովսէս իւր Ուսուցչին մահէն ետքը մեկնեցաւ Ուրհայ, ուր 1607ին, մարտ ամսոյն յօրինեց իւր Ողբն ի մահն Սրապիտնի: Ուրհայէն անցաւ ապա Կ. Պոլիս, ուր հասած էր Գրիգոր Կեսարացի 1608 Դեկտեմբերին, խաղաղեցնելու համար աղգայնոց մէջ ծագած վէճ մը եւ ընտրուած — այս երկրորդ անգամ — պատրիարք: Այս մասին ուշագրաւ է ինչ որ կը գրէ Կեսարացին իրրեւ պատասխան Ամթեցիներուն, որոնք հրաւիրած էին զինքը մխիթարելու մահուամբ Վարդապետին սգաւոր սրտերը<sup>2</sup>. «... Եւ ընդ օրհնութեանս ծանուցումն լիցի սիրելեացդ մերոց, զի յորժամ լուաք զբաւթալից համբաւն որ վասն խաւարման Արեգականն մերոյ, յայնժամ կամէաք առ ձեզ զալ, յողջապուրել զչիրիմ սուրբ նշխարաց նորա. եւ ի մխիթարել զորբացեալ որդիսդ

<sup>2</sup> Ձեռ. էջմ. Թ. 610, թղ. 169 ա—171 ա: